ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

05 ՀՈՒՆԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Արսեն Հակոբյանը, Ֆիրդուս Զաքարյանը, Վահե Հարությունյանը, Կարեն Ադամյանը, Սամվել Մալխասյանը, Սամվել Վարդանյանը, Սիմոն Պետրոսյանը, Ծովինար Ալեքսանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Կարեն Քենդրջյան, Արմեն Բաղդասարյան, Լեոնիդ Ավդիշոեվ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արթուր Մուսիկյանը

Համայնքի ղեկավարի օգնական Կարեն Մելքոնյանը առաջարկեց օրակարգից հանել՝ 60-րդ, 61-րդ, 65-րդ, 68-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, 72-րդ, 73-րդ, 74-րդ և 75-րդ նախագծերը՝ համայնքի ավագանու համապատասխան մշտական հանձնաժողովի եզրակացությունների բացակայության պատճառով և օրակարգում ավելացնել քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության հարցերի և շրջակա միջավայրի պահպանության մշտական հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին նախագիծը՝
Այսպիսով՝

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.
1) Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 5-ի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման արդյունքների մասին:
3) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածներում փոփոխություն կատարելու մասին:
4) ԱՅԳ ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն հատկացնելու թույլտվություն տալու մասին:
5) Արարատի Արաքս ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն հատկացնելու թույլտվություն տալու մասին:
6) Արարատ համայնքի Արարատ քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում յոթերորդ և Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մովսես գորգիսյանի անվան թիվ մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ութերրորդ խմբեր բացելու և Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի N 218-Ա, 2025թվականի փետրվարի 14-ի N 4-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին:
7) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2022թվականի հունվարի 19-ի N 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅՈԹԵՐՈՐԴ ԵՎ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԳՈՐԳԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԴ ԽՄԲԵՐ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 218-Ա, 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. 2025 թվականի սեպտեմբերի 1-ից թույլատրել՝
1) «Արարատ համայնքի Արարատ քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում բացել յոթերորդ խումբ:

2) «Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում բացել ութերորդ խումբ:
2. Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի «Արարատ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2025 թվականի համար հաստատելու մասին» N 218-Ա որոշման Հավելված 1-ում և Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 218-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 4-Ա որոշման Հավելված 2-ում ավելացնել դաստիարակի և դաստիարակի օգնականի 1-ական հաստիք՝ ըստ սահմանված դրույքաչափերի:
3. Հաստատել՝
1) «Արարատ համայնքի Արարատ քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը՝ համաձայն կից Հավելված 1-ի:
2) «Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը՝ համաձայն կից Հավելված 2-ի:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 51-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-4 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 258-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն որոշմամբ հաստատված թիվ 1,2,3 հավելվածների:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԱՅԳ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 11-րդ կետերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Արարատ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման և սոցիալական աջակցության վերաբերյալ չափորոշիչները սահմանող կարգ»-ի 4-րդ մասի պահանջը, ինչպես նաև հաշվի առնելով «Այգ» ֆուտբոլային ակումբ ՀԿ-ի նախագահ Լեոնիդ Ավդիշոևի դիմումը՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Թույլատրել համայնքի ղեկավարին «Այգ» ՀԿ-ին հատկացնել ֆինանսական աջակցություն 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ խոտհնձիչ

մեքենա ձեռք բերելու համար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 49-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏԻ ԱՐԱՔՍ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարմանմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 11-րդ կետերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Արարատ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման և սոցիալական աջակցության վերաբերյալ չափորոշիչները սահմանող կարգ»-ի 4-րդ մասի պահանջը, ինչպես նաև հաշվի առնելով «Արարատի Արաքս» ֆուտբոլային ակումբ ՀԿ-ի նախագահ Ռուբեն Գարեգինյանի դիմումը՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Թույլատրել համայնքի ղեկավարին «Արարատի Արաքս» ֆուտբոլային ակումբ ՀԿ-ին հատկացնել ֆինանսական աջակցություն 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ՝ ֆուտբոլի մարզադաշտի ցանկապատման աշխատանքները պատշաճ կերպով իրականացնելու համար:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 50-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով, հաշվի առնելով ավագանու անդամ Սամվել Վարդանյանի դիմումը՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2022թվականի հունվարի 19-ի «Արարատ համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմերը հաստատելու մասին» N 3 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն՝

1) Որոշման 1-ին կետի 1.3 ենթակետում «Սամվել Վարդանյան» բառերը փոխարինել «Գևորգ Մանուկյան» բառերով և ասյուհետ որոշման 1-ին կետի 1.3 ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«1.3 Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության հարցերի և շրջակա միջավայրի պահպանության մշտական գործող հանձնաժողով.

Սամվել Մալխասյան
Գևորգ Մանուկյան
Վահե Հարությունյան
Սարգիս Մանվելյան
Սերգո Մինասյան»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 52-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԱՐԻՍԱ ԹՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՎԱԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արթուր Մուսիկյանը

_____